Արձանագրություն N 3

ՆԲԿ -16/8-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Ք.Եղվարդ 30 օգոստոսի 2016թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարկոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Սարգսյան, Ս.Սարգսյան, Լ.Սիմոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

1.Բանակցությունների մասին
(Ա.Մարկոսյան)

Ընդունել ի գիտություն, քանի որ 304-րդ չափաբաժնի համար՝ ներկայացված գնային առաջարկը գերազանցում էր նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի հանձնաժողովը որոշել էր.
ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 44-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժինների համար հաղթողներին որոշելու նպատակով կասեցրել էր հայտերի բացման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ բանակցություններ վարելու նպատակով նիստ էր հրավիրվել ս.թ. օգոստոսի 30-ին ժամը 11:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ էր սահմանվել 15 րոպե:

Սահմանված ժամկետում բանակցությունների մասնակցի կողմից նոր գնային առաջարկ չի ներկայացվել:
Մասնակցի կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

Հ/հ	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	<<ԼԵՅԿՈԱԼԵՔՍ> > ՍՊԸ	Նախահաշվային գին
295	Լիդոկային էպինեֆրինով 2% 20մլ	ֆլակոն	20	13007,7	15420
296	Մետոկլոպրամիդ 2մլ	սրվակ	200	9240	12000
297	Կալցի գլյուկոնատ 10% 5մլ	սրվակ	100	6693,333	7800
298	Վարֆարին 2մգ	հաբ	300		14100
299	Ամիոդարոն 200մգ	հաբ	200	14431,67	14500
300	Ֆինոպտին 2.5մլ	սրվակ	100		60000
301	Գինիպրալ 0.5գ	հաբ	100		12700
302	Տամօքսիֆեն 10մգ	հաբ	1200	71780	204000
303	Լիդոկային 10% 38գ աէրոզոլ	ֆլակոն	4	10995,27	13520
304	Կալգել 10գ	հատ	20		24000
305	Ադրենալին 0.18% 1մլ	հաբ	100	11807,5	13600
306	Տրավիսիլ 100մլ	ֆլակոն	10	8533,5	9400

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնահատման մասին
(Ա.Մարկոսյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1.	<<ԼԵՅԿՈԱԼԵՔՍ>> ՍՊԸ	295,296,297,299,302,303,305,306

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3.Հարցում կատարելու մասին

(Ա.Մարկոսյան)

ՆԲԿ-16/8-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

4. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին

(Ա.Մարկոսյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Մարկոսյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՆԲԿ-16/8-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշների գնահատման գնահատող հանձնաժողովի արդյունքների ամփոփման օրը <<Նաիրիի Բժշկական Կենտրոն>> ՓԲԸ , ք.Եղվարդ, Չարենցի 196 շենք՝ տնօրենի ընդունարան հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ Ա.Մարկոսյան

անդամներ՝ Վ. Սարգսյան

Ս. Սարգսյան

Լ. Սիմոնյան

քարտուղար՝ Է.Գրիգորյան